ՆՈԴԱՐ ԴՈՒՄԲԱՁԵ - 95

# «ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՆԴԵՊ ՍԵՐՆ ԻՄ ՀՈԳՈՒ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆ Է ԵՎ ՇԱՏ ԽՈՐՆ ՈՒ ԶՈՒԼԱԼ ԵՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ»



*Ժողովրդական հայտնի խոսք է՝ մարդ կա իր տնից է գնում, մարդ կա իր երկրից, մարդ էլ կա՝ աշխարհից... աշխարհից գնացողներն այլ են, նրանք գնալով, օր-օրի ավելի են մոտենում մեզ, որովհետեւ ֆիզիկական ներկայությանը սկսում է փոխարինել մեր սրտի մեջ ապրող իրենց խոսքը՝ բացակայության միակ սփոփանքը...*

*Վրաց մեծանուն գրող Նոդար Դումբաձեն կդառնար 95 տարեկան: Իր ապրած տարիներին ու այսօր էլ ոչ միայն Վրաստանում, այլեւ Հայաստանում ու աշխարհի շատ երկրներում Դումբաձեն շարունակում է ապրել իր ամենամարդկային խոսքով, իր՝ «Իլիկոն, Իլարիոնը, ես եւ տատիկը», «Ես տեսնում եմ արեւը», «Սպիտակ դրոշները», «Հավերժության օրենքը», «Կուկարաչան», «Աստված ինչո՞ւ համար», «Ապերախտը», «Մի' արթնացրու», «Շունը», «Բազեն քաղաքում ի՞նչ է անում», «Արյունը», «Մի' վախենա, Մայրիկ» ու բազմաթիվ այլ գործերով: Վրաց գրականության ամենահետաքրքիր երեւույթներից մեկի, թբիլիսյան բազմազգ կոլորիտն ու մարդկային ամենանուրբ հուզական աշխարհը բացառիկ հումորով, համուհոտով ներկայացնող Վարպետի խոսքում յուրաքանչյուր ընթերցող անկախ ազգությունից, տարիքից ու մասնագիտությունից, հենց իրեն է տեսնում...*

Նոդար Դումբաձեն ծնվել էր Թբիլիսիում: 9 տարեկանում որբացել ու պատանեկությունն անցկացրել էր տատի տանը՝ Գուրիայում: Գյուղում ապրել էր ընդամենը հինգ տարի: Այդ պարզությունն ու շիտակությունը Դումբաձեի հերոսների մեջ ապրեց ընդմիշտ: Նրանք երբեք սխրանքներ չէին գործում, պարզապես շարունակում էին ծառայել կամ չծառայել իրենց ամենակարեւոր՝ Մարդ կոչմանը: Դումբաձեն ավարտել էր Թբիլիսիի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը: Թեեւ շատ քիչ էր զբաղվել իր մասնագիտությամբ: Գրական գործունեությունն ու արծարծած թեմաները նրան նույնն էին թողել նույնիսկ այն ժամանակ, երբ ճակատագիրը շարունակել էր հարվածել՝ դեռ որբությունը, այնուհետեւ սպանության կեղծ մեղադրանքով բանտարկումը, ինգամյա որդու մահը, սրտամկանի հետ կապված առողջական լուրջ խնդիրները... Գրողի քաղաքացիական արիությունը չէր նահանջել նույնիսկ, երբ ընտրվել էր ԽՍՀՄ 10-րդ եւ 11-րդ գումարումների Գերագույն խորհրդի պատգամավոր: Դումբաձեն շարունակում էր գեղարվեստական նյութի թեմա դարձնել այնպիսի խնդիրներ, որոնց մասին իր գրչակիցները չէին համարձակվում բարձրաձայնել անգամ ընկերական միջավայրում: Ի դեպ, մի առիթով, երբ հարցրել էին, թե ինչպե՞ս է հաջողեցնում, պատասխանել էր՝ *«Ամենայն հավանականությամբ ամեն հանրապետությունից մի գրողի թույլատրում են քննադատական խոսք ասել՝ ծերոնցից՝ Հրանտին, այնտեղ՝ Չինգիզին, ռուսներից՝ Վասիլիին, մերոնցից՝ ինձ...»:*

Մեծանուն գրողը վախճանվեց 1984 թվականի սեպտեմբերի 14-ին: Նրա աճյունը ափոփվեց իր իսկ նախաձեռնությամբ ստեղծված մայրաքաղաքի «Մզիուրի» զբոսայգում: Իսկ 2009 թվականին նրա աճյունը վերահուղարկավորեցին Թբիլիսիի Մթածմինդայի պանթեոնում:

## «...ՀԱՅԻ ՈՒ ՎՐԱՑՈՒ ՀԱՐԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՃԱԿԱՏԱԳՐՈՎ Է ՏՐՎԱԾ»

...Ժողովրդական մի այսպիսի հայտնի խոսք էլ կա՝ սիրո գինը՝ սերն է: Նոդար Դումբաձեն մեծ հայասեր էր. ուշիուշով հետեւում էր հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցող անցուդարձին, հետաքրքրվում գրական-մշակութային նորություններով եւ անկեղծորեն ուրախանում Հայաստանի հաջողություններով:

*«...Հայ ժողովրդի հանդեպ իմ սերն իմ հոգու հարստությունն է եւ շատ խորն ու զուլալ են ակունքները...Հայոսն ու Քարթլոսը հնագույն կուլտուրայի ժողովուրդներ ենք,- ասում էր Դումբաձեն:- Մենք միասին ենք քայլել պատմության քառուղիներով: Մենք հարեւաններ ենք ֆիզիկապես, մինչդեռ ոգով, պաթոսով, արարմամբ նույն էությունն ենք: Մեր հարազատությունը ճակատագրով է տրված»:*

Իր ջերմագին սերը Դումբաձեն վավերացնում էր գրեթե բոլոր երկերում հանդես բերելով հայազգի համակրելի հերոսների՝ իրենց բնորոշ հոգեբանությամբ, սովորույթներով, հոգսերով ու հաջողություններով, թերություններով ու ծիծաղաշարժ կողմերով, աշխատելու ու արարելու եզակի կարողությամբ, ընդ որում, իր կերտած հայ հերոսներին՝ Վանիչկային, Արտավազդին, Գեւորգին, Ռուբենին, Տիգրանին եւ ուրիշներին, անձամբ էր ճանաչում. *«Իմ հերոսների մեջ մտացածին ոչինչ չկա, ասում էր,- առանց բացառության նրանք կյանքից են առնված, բոլորին ճանաչել եմ շատ լավ, նույնիսկ անուն-ազգանունները չեմ փոխել: Վանիչկան, օրինակ, իմ հարազատ մորաքրոջ ամուսինն էր, ուսանողական բոլոր հինգ տարիները ապրել եմ նրանց հետ, նույն հարկի տակ: Ահա այդքանով ես «հայ եմ»...»:*

Ուրեմն օրինաչափ է, որ հայ ընթերցողը նույն սիրով պետք է հետեւեր Դումբաձեի գրական կյանքին ու նրա լավագույն երկերը դարձնել իր «սեփականությունը»: Սկսած նախորդ դարի 60-ականներից Երեւանի եւ Թբիլիսիի թերթերում, ամսագրերում ու հանդեսներում տպագրվում էին գրողի վիպակները, Նոդար Դումբաձեի լավագույն թարգմանիչներից մեկի՝ վրացագետ Հրաչյա Բայրամյանի շնորհիվ, ում հուշերից եւ օգտվել ենք այս նյութը պատրաստելիս:

Նոդար Դումբաձեի պիեսներն առայսօր ներկայացվում են Հայաստանի թատրոններում՝ լինելով խաղացանկում ամենասպասվածն ու սիրվածը: Այդուհանդերձ ամենահիշվողն ու դումբաձեականը թբիլիսյան հայկական թատրոնի ներկայացումն էր: Նրա «Սպիտակ դրոշներ» վեպը վերանվանվելով՝ «Մեղադրական եզրակացության», Թբիլիսիի պետական հայկական թատրոնում բեմադրվեց դեռեւս 70-ականների սկզբին: Ներկայացման առաջնախաղին ներկա գտնվեց անձամբ Դումբաձեն: Վեպի հերոսներն իրականությունից վերցված կերպարներ էին, որոնց անձամբ ճանաչում էր հեղինակը: Գործողությունների հիմքում մեկ բանտախցում օր մթնեցնող մի քանի դատապարտյալներ են, նրանց մտածելակերպի ու նրանց հոգեբանության վրա ճաղավանդակների ազդեցությունը: Ազատների ու բռնավորների մտքի ու գործելու տարբերությունները, որոնք բացահայտվում են երկխոսությունների ու մենախոսությունների օգնությամբ: Իսկ գլխավոր հերոսը՝ Զազան, հենց ինքը Դումբաձեն է:

Այս ներկայացումն այդպես էլ չկորցրեց իր արդիականությունը: Տարիներ հետո, 2016 թվականին, թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանի բեմադրությամբ այն նոր շունչ առավ ու ներկայացվեց նաեւ վրացերեն, դեռ ավելին՝ Շ.Ռուսթավելու անվան ակադեմիական թատրոնի դերասան, Վրաստանի ժողովրդական արտիստ, լուսահոգի Սոսո Լաղիձեն խաղաց Իսիդորեի դերում: Ներկայացումը մեծ հաջողություն ու արձագանք ունեցավ ու շարունակում է հանդիսատեսի սիրտ նվաճել: Այն արդեն ներկայացվել է Վրաստանի գրեթե բոլոր թատրոններում՝ Բաթումիում, Թելավիում, Փոթիում, Քութայիսիում, Ախալցիխեում, Օզուրգեթիում, ինչպես նաեւ Հայաստանում:

...Երեւի այլ կերպ չէր կարող լինել, որովհետեւ Դումբաձեն նորից դիպչել էր մարդկային հոգու ամենանուրբ լարերին...

**Շնորհավոր, սիրելի Վարպետ, հայ ու վրաց մտքում ու գործում ներկայությունդ անպակաս, քանի որ Քո իսկ խոսքերով՝ *«...մեր հարազատությունը ճակատագրով է տրված»:***

*ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ*

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

# ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ՝ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

*Հուլիսի 16-ին, Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին նշեց Տեր Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տոնը, որը ժողովրդի շրջանում ունի Վարդավառ անունը:*

Վարդավառը մեր եկեղեցու հինգ տաղավար տոներից մեկն է: Ժողովրդական ուրախ տոնախմբության վերածվող ու միմյանց վրա ջուր ցողելու ավանդույթով նշանավորվող տոնը:

Թբիլիսիի Սբ. Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Կիրակոս վարդապետ Դավթյանի հանդիսապետությամբ պատարագը մատուցեց Տ. Վիրապ քահանա Ղազարյանը, իսկ Հավլաբարի Սբ. Էջմիածին եկեղեցում՝ Տ. Սամվել քահանա Թորոսյանը:

Տեր Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տոնի հետպատարագյան տոնական հանդիսություններ տեղի ունեցան Ախալքալաքիի «Սուրբ Խաչ», Ախալցիխեի «Սբ. Գրիգոր Լուսավորիչ», Նինոծմինդայի «Սուրբ Սարգիս», Բաթումիի «Սուրբ Փրկիչ» ու հարակից գյուղերի եկեղեցիներում:

Հաջորդ օրը, Հայ Առաքելական եկեղեցում մատուցվեց պատարագ՝ ի հիշատակ ննջեցյալների:

# ՄԱՏԱՂԻ ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԱՌՆՈ ԲԱԲԱՋԱՆՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ 40-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ



Պայծառակերպության տոնի Սուրբ պատարագի ավարտին, Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցու բակում լեգենդար երգահան Առնո Բաբաջանյանի որդու՝ Արայիկ Բաբաջանյանի կողմից՝ հոր մահվան 40-րդ տարելիցի կապակցությամբ կազմակերպվեց մատաղի հյուրասիրություն: Արարողությանը ներկա էին նրա տիկինը՝ Մահա Դիփիանին, ընտանիքի անդամները, Թբիլիսիի պատվավոր քաղաքացի Վան Բայբուրթյանը, մոսկվացի հայտնի լրագրող Արամ Բաբլոյանը, թբիլիսցի արվեստի ստեղծագործությունների հավաքորդ Կոտե Ազիզովը:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

# ՄԱՌՆԵՈՒԼԻԻ ԵՎ ԾԱԼԿԱՅԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏՆԵՐԻ ԲԱՐՁՐ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՄԲ ՄԻ ԽՈՒՄԲ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ԵՂԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

*Հուլիսի 16-18-ը Վրաստանում Հայաստանի դեսպանությունը կազմակերպեց, մի շարք բարերարների աջակցությամբ, Վրաստանի Մառնեուլիի եւ Ծալկայի մունիցիպալիտետների հայաբնակ գյուղերի դպրոցների բարձր առաջադիմությամբ մի խումբ աշակերտների եռօրյա շրջայց Հայաստան:*



Աշակերտներն այցելեցին Ախթալայի վանք, Հաղպատի վանական համալիր, Զառնի-Պառնի քարայրաամրոցային համալիր:, Լոռու մարզի COAF Սմարթ կենտրոն:

Նրանք եղան նաեւ Երեւանի Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնում, «ԱՍԵԴԼ» ընկերությունում:

Դպրոցականներն այցելեցին նաեւ Հայաստանի Ազգային ժողով, որտեղ վերջիններիս դիմավորեց եւ հետաքրքրող հարցերին պատասխանեց պատգամավոր Շիրակ Թորոսյանը: Նույն օրը խումբը Ծիծեռնակաբերդում հարգանքի տուրք մատուցեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին, այցելեց թանգարան-ինստիտուտ:

Դպրոցականները հյուրընկալվեցին նաեւ Հայաստանի արտաքին գործերի նախարարությունում, որտեղ հանդիպում ունեցան Հայաստանում Վրաստանի հյուպատոս Մամուկա Ջանբազիշվիլու հետ:

Աշակերտների խմբին ուղեկցում էր Վրաստանում Հայաստանի դեսպանության երրորդ քարտուղար Դավիթ Տեր-Մկրտչյանը:

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ✵ ԱՅԼԱԶԱՆ ✵ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## ՊՈՄՊԵՈՍԻ ԿԱՄՈՒՐՋԸ ՄՑԽԵԹԱՅՈՒՄ



***Վերջերս պարբերականորեն տեղեկացա, որ մեզ մոտ Վրաստանում պահպանվել են օտարերկրացիների անունների հետ կապված կառույցներ: Օրինակ, մոտ երկու հազար տարվա պատմություն ունեցող Պոմպեոսի կամուրջը՝ Մցխեթայում...***

***Վ.ՍՈՒՔԻԱՍՅԱՆ***
***Կասպի***

Իրոք, նման կառույց Վրաստանում պահպանվել է: Երբ Անդրկովկասյան հիդրոէլեկտրակայանի ամբարտակը բացում են, ջրի մակարդակն իջնում է, եւ Մցխեթայի մոտակայքում կարելի է տեսնել հինավուրց կամուրջի մնացորդներ: Բոլորը չէ, որ գիտեն, որ այդ կամուրջը մեր թվարկությունից առաջ 65 թվականին կառուցել է Մեծ Պոմպեոսը:

Գայ Պոմպեոսը Հարավային Կովկասում հայտնվեց մեր թվարկությունից առաջ 65 թվականին, Պոնտոսի թագավոր Միհրդատի դեմ պատժիչ պատերազմի ժամանակ: Հենց այդ ժամանակ էլ հռոմեացիները Մցխեթայի մոտ կառուցեցին այդ կամուրջը: Այդ ժամանակներից ի վեր , սա միակ կամուրջն էր, որը կապում էր Քուռ գետի երկու ափերը: Կամուրջը գործում էր հնագույն ժամանակներում եւ միջնադարում, թեեւ ակտիվ օգտագործվում էր նույնիսկ 19-րդ դարում: Այն ժամանակ կամուրջը ռազմավարական ճանապարհի հատվածն էր, եւ անգամ Ալեքսանդր Պուշկինը Մցխեթայից Թբիլիսի է եկել՝ անցնելով հենց այդ կամրջով ու թողնելով հակիրճ հիշատակում. «Գարցիսկալայից մի քանի վերստի վրա ձիերի արագընթաց վազքով ուղեւորվեցինք Թբիլիսի, մենք Քուռ գետն անցանք հնագույն կամրջով, որը հռոմեական արշավների հուշարձան է»:

Ցավոք, հիդրոկայանի շինարարությունից հետո, կամուրջը հայտնվեց ցածր մակարդակի վրա եւ գրեթե չէր երեւում: Այն սկսեց աստիճանաբար քանդվել, ծածկվելով տիղմով: Տարիների ընթացքում փլվեցին նաեւ կամրջի երկու աղյուսե կամարները:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

## ԼԵԶՈՒՆ՝ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԻՉ

***Ոչ մի կերպ չեմ կարողանում ազատվել բերանիս եկող փտած հոտից: Առանձնակի վատ եմ զգում, երբ խոսելիս դիմացինս շրջում է դեմքը, կամ ետ է քաշվում...***
***Գ.Մ.***
***Նինոծմինդա***



Բերանից եկող տհաճ հոտը, սովորաբար առաջանում է լեզվի վրա գոյացող փառից:

Այդ փառը գաստրիտի, ստամոքսի խոցի, փորկապության, անգինայի, լուծի, լյարդի եւ այլ հիվանդությունների հետեւանք է:

Լեզուն պետք է մաքրել եւ հետեւել նրա առողջությանը:

Եթե փառը շատանում է, դա, առաջին հերթին, օրգանիզմի անբարենպաստ վիճակի ահազանգ է:

Լեզվի մաքրումը նպաստում է տհաճ հոտի վերացմանը, խոչընդոտում ատամների քայքայմանը:

Լեզվի մաքրումը պետք է կատարել առավոտյան, ատամները մաքրելուց հետո:

Կարելի է թեյի գդալով թեթեւակի քերել լեզուն խորքից մինչեւ ծայրը: Գդալը շատ խոր տանելու կարիք չկա, կարող է սրտխառնոց առաջացնել: Կոպիտ սեղմել պետք չէ, կարող է լեզուն վնասվել: 2-3 նման շարժումից լեզուն մաքրվում է:

Ընտրեք այնպիսի ատամի խոզանակ, որի հետեւի մասում կա խորդուբորդ մակերեւույթ: Դա հենց նախատեսված է լեզվի մաքրման համար: Խորդուբորդ մակերեւույթն ավելի հարմար է: Ամեն առավոտ 2-3 անգամ պետք է ատամի խոզանակի հակառակ կողմով քերել լեզուն:

ԸՆԹԵՐՑՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

## ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՎԵԼ ՄՐՋՅՈՒՆՆԵՐԻՑ

***Ամառային տապի հետ միասին լուրջ անհանգստություն են պատճառում ամենուրեք հայտնվող մրջյունները:***

***«Վրաստանի» ընթերցող Աշոտ Վարդանյանը Թբիլիսիից, մեզ հետ կիսեց մրջյուններից պաշտպանվելու իր փորձը:***

Մրջյունները կարող են շատ տհաճություններ պատճառել: Քանի որ մրջյունների դեմ սինթետիկ միջոցներով պայքարելը ոչ միայն վնասակար ազդեցություն է թողնում բնապահպանական իրավիճակի վրա, այլեւ վտանգ է ստեղծում երեխաների եւ տնային կենդանիների համար, խորհուրդ է տրվում այդ անհաճո «հարեւաններին» քշել եթերայուղերի օգնությամբ:

Վերցրեք 250 մլ էթիլային սպիրտ եւ դրան ավելացրեք 20 կաթիլ անանուխի, 10 կաթիլ նարդոսի եթերայուղ: Պատրաստի լուծույթին ավելացրեք 250 մլ ջուր: Ստացված խառնուրդը լցրեք հեղուկացրի (պուլվերիզատոր) մեջ եւ ցողեք: Այդ գործողությունը կարելի է կրկնել բավական հաճախ, սակայն ամեն օգտագործելուց առաջ՝ լուծույթը թափահարել:

ԿԵՆՑԱՂԱՅԻՆ

## ԻՆՉՊԵՍ ԴԻՄԱԿԱՅԵԼ ԱՄՌԱՆ ՇՈԳԻՆ



*Արդեն որերորդ տարին է, ինչ լրատվամիջոցներն ահազանգում են ռեկորդային բարձր ջերմաստիճանի եւ արդյունքում՝ անտառային հրդեհների, երաշտի, անբերրիության եւ այլ բարդությունների մասին: Բացառություն չկազմեց նաեւ այս տարին: Օդերեւութաբանների տեղեկատվությամբ՝ Եվրոպայում, ԱՄՆ-ում եւ Չինաստանում շարունակվում է ծայրահեղ շոգ եղանակը: Անցյալ շաբաթ հարավային Եվրոպային պատուհասած «Կերբերոս» տապի ալիքին այս շաբաթ փոխարինելու է եկել «Քարոն»-ը:*

*Իսպանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Թուրքիայում, Բալկանյան երկրներում եւ Հունաստանում սպասվում է Ցելսիուսի սանդղակով 40 աստիճանից բարձր ջերմաստիճան: Չինաստանի հյուսիս-արեւմտյան Սինծիան նահանգում արձանագրվել է երբեւէ գրանցված ամենաբարձր ջերմաստիճանը՝ 52,2 աստիճան: Կալիֆոռնիայում հուլիսի 16-ին գրանցվել է 53,9 աստիճան տաքություն, երկրագնդի վրա մինչ օրս գրանցված ամենաբարձր ջերմաստիճանը եղել է 56,7 աստիճան:*

*Ըստ Համաշխարհային օդերեւութաբանական կազմակերպության՝ գլոբալ տաքացման հետեւանքով ծայրահեղ եղանակային պայմանները «ցավոք, դառնում են նոր նորմա»:*

*«Ջերմաստիճանային ռեկորդներից» անմասն չէ նաեւ Հարավային Կովկասը: Մասնավորապես Վրաստանն եւ Հայաստանն էլ վերջին տարիներին եւս գրանցել են իրենց «ռեկորդները»:*

Ամառային եղանակը մարդու օրգանիզմի վրա իր բարերար դրական ազդեցության հետ մեկտեղ, կարող է նաեւ առաջացնել առողջական վիճակի տարաբնույթ խանգարումներ: Շոգ եղանակին մարդու օրգանիզմի վրա առավել մեծ ազդեցություն ունեցող հիմնական բացասական գործոններն են օդի բարձր ջերմաստիճանն ու ուլտրամանուշակագույն ճառագայթումը:

Ուլտրամանուշակագույն ճառագայթման հիմնական աղբյուրը արեւի ճառագայթումն է: Քիչ քանակով այն կարեւոր նշանակություն ունի մարդու կենսագործունեության համար, քանի որ խթանում է իմունային համակարգի գործունեությունը, ոսկրային համակարգի ձեւավորման, նյութափոխանակության գործընթացները, բարձրացնում է օրգանիզմի դիմադրողականությունը, աշխատունակությունը եւ այլն: Սակայն մեծ քանակով երկարատեւ ազդեցությունը համարվում է վտանգավոր եւ մարդու առողջության վրա կարող է ունենալ խիստ բացասական հետեւանքներ ինչպես սուր, այնպես էլ՝ ուշացած ախտահարումներով՝ առաջացնելով արեւային այրվածք (մաշկի կարմրություն, այտուց, ցավ, բշտերի գոյացում), արեւահարություններ, ֆոտոկոնյուկտիվիտ (կոպերի ցավոտություն, կարմրություն, աչքերում ավազի զգացողություն, լուսավախություն, արցունքահոսություն), ֆոտոալերգիա, մաշկի չարորակ նորագոյացություններ՝ մելանոմաներ: Տեղային ախտահարումները կարող են ուղեկցվել նաեւ ընդհանուր տոքսիկ երեւույթներով՝ մարմնի ջերմաստիճանի բարձրացում, գլխացավ, սարսուռ, սրտխառնոց, փսխում:

Ջերմաստիճանի բարձրացմանը զուգընթաց, բարձրանում է նաեւ մարդու օրգանիզմի ջերմակարգավորող համակարգի ծանրաբեռնվածությունը: Իր կենսագործունեության համար անհրաժեշտ հաստատուն ջերմաստիճանն ապահովելու համար, ստիպված շատ ավելի ինտենսիվ են աշխատում օրգանիզմի մի շարք օրգան-համակարգեր, հատկապես սիրտանոթային եւ շնչառական համակարգերը, ինչի արդյունքում առաջանում են գործունեության խանգարումներ: Բարձր ջերմաստիճանը բացասաբար է ազդում նաեւ կենտրոնական նյարդային համակարգի վրա:

Օրգանիզմի ջերմատվության հիմնական ուղին քրտնարտադրությունն է, որն ապահովում է ջերմատվության 85%-ը, այն խիստ ավելանում է շոգ եղանակներին՝ նպաստելով օրգանիզմի հովացմանը: Սովորաբար օրվա ընթացքում մարդու օրգանիզմից գոլորշիանում է 2-2.5 լիտր հեղուկ, շոգ եղանակին՝ կարող է հասնել մինչեւ 4 լիտրի: Ակտիվ քրտնարտադրության արդյունքում մարդու օրգանիզմը ջրազրկվում է՝ կորցնելով հեղուկներ, հանքային աղեր (նատրիում, կալիում, կալցիում, մագնեզիում եւ այլն), ջրալույծ վիտամիններ եւ սպիտակուցներ: Արդյունքում, մարդկանց մոտ կարող է առաջանալ թուլություն, գլխացավ, ապատիա, քնկոտություն, սաստիկ ծարավ: Գիտնականների հաշվարկով 1լ հեղուկ կորցնելու դեպքում՝ մարդուն սկսում է տանջել ծարավի զգացումը: 2 լիտրի դեպքում նվազում է մտավոր գործունեության ունակությունը, 3 լիտրի դեպքում սկսվում է գլխապտույտ, 4-ի դեպքում՝ սրտային նոպաներ:

Ջերմաստիճանի բարձրացման նկատմամբ հատկապես զգայուն են երեխաները, հղիները, ծերերը եւ քրոնիկ հիվանդություններով տառապող անձինք:

Ջերմաստիճանի բարձրացման եւ ուլտրամանուշակագույն ճառագայթման բացասական ազդեցությունը մեղմելու, օրգանիզմի անցանկալի գերտաքացումը մեղմելու կամ կանխելու, ինչպես նաեւ մրսածությունից խուսափելու համար անհրաժեշտ է խուսափել արեւի ուղիղ ճառագայթներից՝ հատկապես ժամը 12:00-17:00 ընթացքում չընդունել արեւային լոգանք, հնարավորինս պաշտպանվել ուլտրամանուշակագույն ճառագայթումից՝ կրելով գլխարկ, արեւային ակնոց, հովանոց, հագնել սպիտակ կամ բաց երանգների ազատ, օդաթափանց, ցանկալի է բամբակյա կտորից հագուստ, օգտագործել սովորականից շատ հեղուկներ (օրական մոտ 3 լիտր), հեղուկները պետք է լինեն գոլ կամ մի փոքր հովացրած, ցանկալի է հրաժարվել կծու, յուղոտ կերակուրներից, նախընտրել ավելի թեթեւ, դյուրամարս սնունդ, օգտագործել շատ մրգեր եւ հում բանջարեղեն, չչարաշահել կոֆեին եւ շաքար պարունակող ըմպելիքները՝ թե' տաք, թե' սառը վիճակում, արգելվում է գտնվել չօդափոխվող կամ վատ օդափոխվող տարածքներում, երկար ժամանակ մնալ արեւի տակ կայանված փոխադրամիջոցներում, երեխաներին թողնել փակ պատուհաններով ավտոմեքենաներում...

Այս ցանկը կարելի է շարունակել, թեպետ վերոնշյալի պահպանումն էլ ձեզ եւ ձեր հարազատներին կարող է պաշտպանել բարձր ջերմաստիճանի ազդեցությունից:

## ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



☞ *Շողոքորթությունը արատների օգնականն է:*

***ՖՐԻԴՐԻԽ ՆԻՑՇԵ***

☞ *Ստախոսին մենք չենք հավատում նույնիսկ այն ժամանակ, երբ նա ճշմարտությունն է ասում:*

***ԱԲՐԱՀԱՄ ԼԻՆԿՈԼՆ***

☞ *Օգուտը ոչ թե շատ, այլ լավ գրքերի մեջ է:*

***ՍԵՆԵԿԱ***

☞ *Դաժանորեն կյանք նետվելով՝ պատանին ստիպված է մոռանալ բավարարման ամենասիրած միջոցները եւ հարմարվել նորերին: Այդ դաժան խաղը կրկնվում է զարգացման յուրաքանչյուր նոր փուլ անցնելիս:*

***ՖԱՐԿԱՇ ՖԵՐԵՆՑ***

☞ *Կանայք միշտ ճիշտ են: Գիտեք ինչո՞ւ՝ որովհետեւ...*

***ԱՐՏԱՇԵՍ ԱՍԼԱՆՅԱՆ***
***«Վրաստանի» ընթերցող***
***Թբիլիսի***

# ՀԱՅԱՍՏԱՆ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՀԱՅԱՍՏԱՆԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱՄԵԾ ԱՐՏԱՀԱՆՈՂ ԵՐԿԻՐՆ Է



*Նախնական տվյալների համաձայն՝ 2023 թվականի հունվար-հունիսին տասը խոշորագույն արտահանման գործընկեր երկրների մասնաբաժինը Վրաստանի ընդհանուր արտահանման մեջ կազմել է 80,6 տոկոս: Այդ մասին տեղեկացրել է Վրաստանի Ազգային վիճակագրական ծառայությունը:*

Ըստ Ազգային վիճակագրական ծառայության՝ 440,0 մլն դոլարով Հայաստանն առաջին տեղում է, երկրորդ տեղում է Ադրբեջանը՝ 413,3 մլն դոլարով, իսկ Ռուսաստանը երրորդն է՝ 343,9 մլն դոլարով:

Ինչ վերաբերում է ներմուծմանը, ըստ գերատեսչության տվյալների, այս տարվա հունվար-հունիսին Վրաստանի ներմուծման ընդհանուր ծավալում տասը խոշորագույն ներմուծման գործընկեր երկրների բաժինը կազմել է 70,5 տոկոս: Առաջին եռյակում են Թուրքիան՝ 1246,9 մլն դոլար, Ռուսաստանը՝ 927,3 մլն դոլար եւ ԱՄՆ-ը՝ 775,2 մլն դոլար:

Բացի այդ, 2023 թվականի հունվար-հունիսին արտահանման լավագույն տասնյակում առաջին տեղն են զբաղեցրել թեթեւ մեքենաները՝ 990,9 մլն դոլարով, որը կազմում է ամբողջ արտահանման 32,5 տոկոսը:

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ, ՎԱՃԱՌՔՆ ՈՒ ԿԻՐԱՌՈՒՄՆ ԱՐԳԵԼՎԵՑ



*Հայաստանի Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունեց հրագործական արտադրանքների ներմուծումը, վաճառքն ու կիրառումն արգելող օրենքը՝ Լիցենզավորման մասին օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին: Կից ներկայացված օրենքների նախագծերի փաթեթին կողմ քվեարկեց 60, ձեռնպահ՝ 22 պատգամավոր:*

«Քաղաքացիական պայմանագիր» խորհրդարանական խմբակցության նախաձեռնած օրինանախագծով հրավառությունները դասարակգվում են 5 դասերի: 1-ին եւ 2-րդ դասերը օրենքով կոչվելու են կենցաղային նշանակության հրագործական արտադրատեսակներ: Դրանք առավել փոքր ծավալի ազդեցություն ունեցող հրագործական արտադրատեսակներն են, որոնք ծննդյան տորթերի վրա դրվող փոքրիկ հրավառություններն են: Իսկ 3-րդ, 4-րդ եւ 5-րդ դասի հրավառությունները դրսում կիրառվող հրավառություններն են: Սրանք էլ օրենքով սահմանվում են որպես տեխնիկական նշանակության հրագործական արտադրատեսակներ:

Օրենքով սահմանվող պայմանների խախտման դեպքում մեծ տուգանքներ են սահմանվել: Առաջին խախտման դեպքում տուգանքը կկազմի 1-2 միլիոն դրամ, մեկ տարվա ընթացքում կրկնվելու դեպքում՝ 3 միլիոն դրամ:

Օրենքով սահմանվում է նաեւ, որ թեթեւ հրավառ նյութերի վաճառքը 16 տարին չլրացած անձանց արգելվում է:

Օրենքն ուժի մեջ է մտնելու 6 ամսից:

## ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՐՈՒՄԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

*Հուլիսի 15-ին Երեւանում առաջին անգամ անցկացվեց Մեղվաբուծության համահայկական ֆորումը:*

Համաժողովը կազմակերպվել էր «Մեղվաբուծության դարբնոց» գիտակրթական կենտրոնի նախաձեռնությամբ, Հայաստանի էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ՝ ԱՄՆ Միջազգային Զարգացման գործակալության (USAID) եւ Ագրոբիզնեսի եւ գյուղի զարգացման կենտրոն (CARD) հիմնադրամի աջակցությամբ:

Միջոցառմանը ներկայացվեց Մեղվաբուծության զարգացման ռազմավարական ծրագիրը: Ելույթներ հնչեցին նաեւ Հայաստանում մեղվաբուծության զարգացման նախադրյալների ու առկա խոչընդոտների, մեղրի արտահանման ներուժի, հնարավորությունների եւ ռիսկերի վերաբերյալ:

Մասնակիցներն անդրադարձան նաեւ մեղվաբուծության խթանմանն ուղղված ծրագրերի իրականացմանը, քաղաքային (ուրբան) մեղվապահությանը, օրգանական մեղվաբուծության առանձնահատկություններին, առավելություններին եւ առկա մարտահրավերներին, ինչպես նաեւ ոլորտին առնչվող մի շարք այլ հարցերի:

## ՄԱՇԱ ՄՆՋՈՅԱՆԸ՝ «ՍԼԱՎՅԱՆՍԿԻ ԲԱԶԱՐ» ՄՐՑՈՒՅԹԻ ԳՐԱՆ ՊՐԻԻ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ




*Բելառուսի Վիտեբսկ քաղաքում, հուլիսի 14-16-ը, կայացել է «Սլավյանսկի բազար 2023» երիտասարդ կատարողների 32-րդ ամենամյա միջազգային մրցույթը, որտեղ այս տարի մասնակցում էր 15 երկիր: Հեղինակավոր այս մրցույթում Հայաստանը ներկայացրել է երգչուհի Մաշա Մնջոյանը, ում կատարմամբ «Խոստացի'ր ինձ սեր» երգը՝ արժանացավ ժյուրիի 66 միավորի: Իսկ երկրորդ մրցութային օրը, որպես միջազգային հիթ, կատարել է Արետա Ֆրանկլինի «Respect» ստեղծագործությունը՝ արժանանալով 69 միավորի:*

Արդյունքում, Մաշան մրցութային օրերին վաստակել է 135 միավոր՝ դառնալով հեղինակավոր մրցույթի բացարձակ հաղթողն ու արժանանալով Գրան Պրի մրցանակի: Հայաստանն առաջին անգամ է հաղթող ճանաչվել «Սլավյանսկի բազար» երիտասարդ կատարողների մրցույթում:

«Սլավյանսկի բազար-2023» մրցույթում 1-ին մրցանակի է արժանացել Բելառուսի ներկայացուցիչը, 2-րդ մրցանակը կիսվել է Ռուսաստանի եւ Ուզբեկստանի ներկայացուցիչների միջեւ, իսկ 3-րդ մրցանակը բաժին է հասել Ղազախստանի եւ Ուզբեկստանի ներկայացուցիչներին:

Հուլիսի 12-14-ը կայացած «Սլավյանսկի Բազար-2023» մանկական կատարողների մրցույթում Հայաստանի փոքրիկ պատվիրակ 10-ամյա Անահիտ Գալստյանը, մրցութային երկու օրերին դառնալով ֆավորիտներից մեկը, 133 միավորով զբաղեցրել է 2-րդ մրցանակային տեղը:

## «ԵՐԱԶԻՑ» ՀԵՏՈ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍԿՍՎԵՑ «ՍԵՊՈՒՀ-1» ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

### ԾՐԱԳՐՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍԿՍԵԼ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԹՈՂԱՐԿՈՒՄԸ




*«Սեպուհ-1»-SsangYong հարավկորեական բրենդի ավտոմեքենաները հավաքվում են Հայաստանում:*

Նոր Նորքում գործող «Սեպուհ-1» ընկերության (հիմնադիր-սեփականատերը պարսկահայ գործարար Ջանես Ավետյանն է) Հայաստանում թողարկել է արդեն 8 ավտոմեքենա, դրանցից որոշները ստացել են պետական գրանցման համարանիշեր: Մեքենաների արժեքը մոտավորապես 30-40 հազար դոլարի շրջանակներում է:

«Սեպուհ-1» ընկերությունն արտադրում է SsangYong հարավկորեական բրենդի ավտոմեքենաներ: Մեքենաների արտադրությունը ենթադրում է խոշոր հանգուցային մասերի ներկրման արդյունքում հավաքված ավտոմեքենաներ: Նման պրակտիկան տարածված է աշխարհի շատ երկրներում:

Նախորդ տարվա սեպտեմբերին «Սեպուհ-1»-ը սերտիֆիկացրել է 4 մեքենա, 2023-ի փետրվարին՝ եւս 4-ը: Ի դեպ, «Սեպուհ-1»-ը կազմակերպության ֆիրմային անվանումն է, մեքենաները հարավկորեական SsangYong ընկերության ավտոմեքենաներն են:

Պետության եւ «Սեպուհ-1»-ի սեփականատիրոջ հետ առաջին խոսակցությունները սկսվել են դեռեւս 2019 թվականից:

Պետական համարանիշեր ստանալուն պես՝ Հայաստանում հավաքված այս բոլոր ավտոմեքենաները պատրաստ կլինեն շահագործման:

Հայաստանի էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանի խոսքով, Հայաստանի կառավարությունը շարունակելու է ջանքերը, որ երկրում հիմնվի էլեկտրական մեքենաների արտադրություն եւ ներկայումս աշխատանքներ են տարվում Հայաստանում էլեկտրական ավտոմեքենաների թողարման ուղղությամբ:

Նախարարը տեղեկացրեց, որ վերջերս այցելել է Չինաստանում ավտոմեքենաներ արտադրող խոշոր ընկերություն: «Եվ մեր թեման եղել է Հայաստանում արտադրություն հիմնելը»,-ասաց Վահան Քերոբյանը:

### ԿՐԹԱԹՈՇԱԿԸ՝ 5 ՀԱԶԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ 77 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ

*Դիմորդների շրջանում ագրարային եւ մանկավարժական մասնագիտությունների նկատմամբ գրավչությունը ավելացնելու նպատակով առաջարկվում են փոփոխություններ:*

*Նախատեսվում է կտրուկ բարձրացնել կրթաթոշակի չափը: Ներկայիս 5-6 հազար դրամի փոխարեն կսահմանվի 70-77 հազար դրամ: Կրթաթոշակ տրամադրվելու է ինչպես անվճար, այնպես էլ՝ վճարովի սովորող ուսանողներին: Գերազանց սովորողները կստանան 10 տոկոս հավելավճար: Նախագիծը շուտով կներկայացվի կառավարությանը: Այն հաստատվելուց հետո հավանական է, որ հենց այս ուսումնական տարվա սկզբից ագրարային եւ մանկավարժական մասնագիտություններով ընդունված ուսանողները ստանան բարձրացված կրթաթոշակ:*

### ԱՐԱ ԽԶՄԱԼՅԱՆԸ՝ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆ



*Հուլիսի 17-ին Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի փոխնախարար Արա Խզմալյանն ընտրվեց «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ հիմնադրամի տնօրեն:*

*Հայաստանի վարչապետի որոշմամբ՝ Արա Խզմալյանը ազատվել է Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալի պաշտոնից:*

*Տնօրենի թափուր տեղի համար հայտ էին ներկայացրել Մատենադարանի տնօրենի ԺՊ Կարեն Մաթեւոսյանը, ԿԳՄՍ փոխնախարար Արա Խզմալյանը եւ պատմական ու բանասիրական գիտությունների դոկտոր, Մատենադարանի գիտաշխատող Արծրունի Սահակյանը:*

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՎԻԱՓՈԽԱԴՐՈՂ FLY ARNA-Ն ՄԵԿ ՏԱՐԵԿԱՆ Է

*1070 թռիչք, 100-ից ավելի աշխատակից եւ նոր ուղղություններ. Հայաստանի ազգային ավիափոխադրող Fly Arna-ն ավելի քան մեկ տարի երկնքում է:*

*Ավիաընկերությունն առաջին թռիչքն իրականացրել է 2022 թվականի հուլիսի 3-ին եւ այս պահին ուղղություններ կան դեպի Թբիլիսի, Թեհրան, Բաղդադ, Սանկտ Պետերբուրգ, Սոչի, Մոսկվայի երկու օդանավակայաններ: Ընկերությունը մտադիր է մինչեւ 2023 թվականի վերջն ընդլայնել ուղղությունների աշխարհագրությունը:*

*Fly Arna ավիաընկերությունն աշխատում է շատ խիստ անվտանգային ստանդարտներով եւ պահպանում է բոլոր անհրաժեշտ կանոնները: Ավիաընկերությունը Հայաստանում միակն է, որն անցել է «IOSA» (այոսա) աուդիտը, որն ավիացիայի ոլորտում ամենաբարդն է համարվում: Այն ընկերությունները, որոնք կարողանում են անցնել այս աուդիտը, համարվում են աշխարհում ամենաբարձր անվտանգություն ապահովող ավիաընկերություններ:*

### ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԲԱՐՁՐԱՑԵԼ Է

*Սեւանա լճի մակարդակն այս պահին 1956սմ է, մայիսի 14-ի դրությամբ բարձրացել է 13 սմ-ով:*

*Մայիսի 14-ի դրությամբ Սեւանի մակարդակը եղել է 1943 սմ: Այսօրվա դրությամբ՝ 1956 սմ:*

*Այս տարի, մինչեւ այսօր, Սեւանա լճից ոռոգման նպատակով իրականացվել է 82.3 մլն խմ ջրառ, Արփա-Սեւան թունելի համակարգով դեպի Սեւան տեղափոխվել է 81.38 մլն խմ: 13 մլն խմ-ը հաշվարկային 1 սմ-ն է:*

ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏՈՆ

## ՀՈՒԼԻՍԻ 23-ԻՆ ԳԱՆՁԱՅՈՒՄ ԿԱՆՑԿԱՑՎԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏԵՐՅԱՆԱԿԱՆ ՊՈԵԶԻԱՅԻ ՕՐԸ



*Հուլիսի 23-ին Նինոծմինդայի մունիցիպալիտետի Գանձա գյուղում բանաստեղծ, քաղաքական եւ հասարակական գործիչ, մեծանուն Վահան Տերյանի ծննդավայրում կտոնվի ավանդական Տերյանական օրը:*

*Տերյանական օրը կմեկնարկի ժամը 11:00-ին. Գանձայի Սուրբ Կարապետ եկեղեցում կմատուցվի Սուրբ պատարագ, որին կհաջորդի Վահան Տերյանի տուն-թանգարան այցելությունը: Օրը կավարտվի ժողովրդական ավանդական դաշտահանդեսով Գնդլիկ սարի փեշին:*

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՀՈՒԼԻՍ



***25.07.2023 Աթանագինե եպիսկոպոսի եւ տասն աշակերտների նահատակության հիշատակության օր***

***29.07.2023 Սուրբ Գրիգոր Լուսավորչի որդիների եւ թոռների՝ Արիստակեսի, Վրթանեսի, Հուսիկի, Գրիգորիսի եւ Դանիելի հիշատակության օր***

ԹԵԺ ԳԻԾ

## ԲՈԼՈՐԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐ

*Շտապ բժշկական օգնություն* - **112**
*Պարեկային ոստիկանություն* - **112**
*Հրշեջ-փրկարար ծառայություն* - **112**
*Պահակային ոստիկանություն* - **125**
*Գլխավոր տեսչություն* - **126**
*Տեղեկատու բյուրո* - **118 08**
*Քաղաքապետարանի թեժ գիծ* - **272-22-22**
*Առողջապահության նախարարության թեժ գիծ* - **15-05**
*Ժողովրդական պաշտպան* - **299-58-98, 292-24-79**
*Մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն* - **14-81**
*«Թբիլիսի էներջի»-ի տեղեկատվական ծառայություն* - **114, 240-40-04**
*«Վարկեթիլաիրի»-ի տեղեկատվական ծառայություն* - **227-50-40**
*ԹԵԼՄԻԿՈ-ի թեժ գիծ* - **16 700, (+995 32)** 5 000 777
*Ջրամատակարարման թեժ գիծ* - **293-11-11**
*Կոյուղու վթարային ծառայության թեժ գիծ* - **(593) 50-42-52**
*Օդանավակայանի տեղեկատվական բյուրո* - **231-03-41, 231-04-21**
*Երկաթուղային կայարան* - **1331, 2199010**
*Դիդուբեի «Օկրիբա» ավտոկայարան* - **(599) 74-73-73**

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

## ԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ Է ԹԲԻԼԻՍԻԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐԱՆՑՈՒՄԸ



***Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեի հայտարարությամբ, ընթացքի մեջ է Թբիլիսիի մանկապարտեզներում 2023-2024 ուսումնական տարվա էլեկտրոնային գրանցման գործընթացը:***

- Այս տարի առաջին անգամ ներդրվել է եռաստիճան գրանցում, ինչը նշանակում է թիրախային սոցիալական խմբերը ներկայացնող երեխաների գրանցում առաջին փուլում: Նշված փուլին արդեն գրանցվել է 2621 երեխա, եւ պահանջարկն ամբողջությամբ բավարարվել է,- ասաց Կախա Կալաձեն:

Նրա խոսքով՝ գրանցման երկրորդ փուլին մասնակցում են միայն Թբիլիսիի քաղաքապետարանի տարածքում գրանցված երեխաները:

Թբիլիսիի քաղաքապետի տեղեկատվությամբ՝ նշված փուլին, մինչ օրս գրանցվել է մոտ 5000 երեխա:

Կախա Կալաձեի խոսքով՝ երրորդ փուլը՝ համընդհանուր գրանցումը կսկսվի հուլիսի 25-ին:

Այս փուլում կգրանցվի մինչեւ 7500 երեխա, որտեղ 2-ից 6 տարեկան ցանկացած երեխա ինչպես Վրաստանի քաղաքացիությամբ, այնպես էլ՝ կացության թույլտվությամբ, կարող է ընդունվել Թբիլիսիի պետական մանկապարտեզ:

ՍՊՈՐՏ

### ՎՐԱՑ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՁՅՈՒԴՈԻՍՏՆԵՐԸ՝ ԵՎՐՈՊԱՅԻ ԳԱՎԱԹԱԿԻՐՆԵՐ

*Ավստրիայի Գրաց քաղաքում անցկացված եվրոպայի գավաթի խաղարկությունում Վրաստանի երիտասարդ ձյուդոիստների հավաքականն ընդհանուր թիմային պայքարում գրավեց առաջին տեղը: Վրացի ձյուդոիստները մրցույթում նվաճել են ինը մեդալ՝ չորս ոսկե, մեկ արծաթե եւ չորս բրոնզե:*

*Մարզական հավաքի պատճառով Հայաստանի երիտասարդ ձյուդոիստները մրցաշարին չեն մասնակցել:*

### ՖՈՒՏԲՈԼԻ ՎՐԱՑԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԻՄԵՐԸ ԱՌԱՋԻՆ ԻՍԿ ՓՈՒԼՈՒՄ ԴՈՒՐՍ ՄՆԱՑԻՆ ՉԵՄՊԻՈՆՆԵՐԻ ԼԻԳԱՅԻՑ

*Անցած շաբաթ անցկացվեցին Չեմպիոնների լիգայի որակավորման առաջին փուլի պատասխան հանդիպումները:*

*Վրաստանի չեմպիոն Թբիլիսիի «Դինամոն» Աստանայում իր հանդիպումը Ղազախստանի չեմպիոն «Աստանայի» հետ ավարտելով 1:1 հաշվով, մրցաշարի երկրորդ փուլ անցնելու լավ հնարավորություն ուներ, թեպետ սեփական հարկի տակ պատասխան հանդիպման մեջ պարտություն կրեց 1:2 հաշվով ու դուրս մնաց մրցաշարից:*

*Անհաջողության մատնվեց նաեւ Հայաստանի չեմպիոն Երեւանի «Ուրարտուն»՝ սեփական հարկի տակ 0:1 հաշվով զիջեց Բոսնիա եւ Հերցեգովինայի չեմպիոն «Զրինսկին», մրցակցի դաշտում 2:1 հաշվով հիմնական ժամանակում հաղթեց եւ հանդիպումը տեղափոխվեց լրացուցիչ ժամանակ:*

*Լրացուցիչ ժամանակում թիմերին հաջողվեց մեկական անգամ գրավել միմյանց դարպասը եւ այս խաղում որոշիչ դեր խաղացին հետխաղյա 11 մետրանոց հարվածաշարերը, որտեղ առավել դիպուկ էին «Զրինսկի»-ի ֆուտբոլիստները՝ 4:3:*

### ՖԻՖԱ-Ի ՆՈՐԱՑՎԱԾ ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ՎՐԱՍՏԱՆՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԱՀՊԱՆԵՑԻՆ ԴԻՐՔԵՐԸ

*Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻՖԱ) հրապարակեց ազգային հավաքականների դասակարգման նոր աղյուսակը:*

*Որակավորման նոր սանդղակում Վրաստանի եւ Հայաստանի հավաքականները պահպանեցին իրենց դիրքերը, համապատասխանաբար, զբաղեցնելով 78-րդ եւ 90-րդ հորիզոնականները:*

*ՖԻՖԱ-ի նորացված աղյուսակի առաջին տասնյակում փոփոխություններ չկան՝ աղյուսակը գլխավորում են Արգենտինայի, Ֆրանսիայի, Բրազիլիայի, Անգլիայի, Բելգիայի, Խորվաթիայի, Նիդերլանդների, Իտալիայի, Պորտուգալիայի եւ Իսպանիայի հավաքականները:*

## ԽԱՉԲԱՌ



***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Ակնկալիք: 7.Փափուկ մետաղ: 8.Խմբակային կրակոց: 11.Անգլիացի ֆիզիկոս, մաթեմատիկոս ... Նյուտոն: 15.«Ուժը հատած, բայց թոռան հետ նոր ուժ գտած»: 17.Գիտություն ժառանգության մասին: 19.Սպառազեն, հրացանակիր: 21.Բրազիլացի նախկին ֆուտբոլիստ: 22.Իտալական ծագումով բելգիացի շանսոնյե Սալվատորե ...: 25.Բուխարեստի լեզուն: 27.Հյուսնի գործիք: 28.Ճապոնական էլեկտրոնիկայի ֆիրմա: 33.Շատախոս երեխա: 34.Բրիտանացի ջութակահարուհի ... Մեյ: 35.Թիվ, խազ: 36.Գետ Ռուսաստանում: 37.Լրագրության հիմնական ժանրերից: 40.Սրճարան: 41.Թմրաքուն: 42.Վրաց Բագրատիոնի տոհմի թագուհի, ում օրոք Վրաց թագավորությունը հասել է հզորության ու ծաղկման գագաթնակետին: 45.Ամենաքաղցրը եւ ամենադառը: 46.Հայոց Բագրատունի տոհմի թագավոր: 47.Արձան: 48.Ավստրիացի նշանավոր կոմպոզիտոր Վոլֆգանգ Ամադեուս ...:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Ե'վ քարտ, ե'ւ վիրաբուժության կենտրոն: 3.Ստրուկների ապստամբության առաջնորդ Հին Հռոմում (մ.թ.ա. 74-71թթ.): 4.Ցանի թե: 5.Կարողություն չունեցող: 6.Սպորտային գույք: 9.Զբոսայգի, պուրակ: 10.Գեղեցիկ սեռի ներկայացուցիչ: 12.Կահույքի մաս: 13.Սահմանափակ խելքի տեր մարդ: 14.Կարգ ու ...: 16.Անասունների բուժումով զբաղվող հիմնարկություն: 18.Թռչունների խումբ, տարմ: 20.Կառք վարող: 23.Ֆրանսիացի դերասան Ալեն ...: 24.Երկու տարբեր ցեղերի խաչավորումից առաջ եկած կենդանի կամ բույս: 26.Իրոք, իսկապես: 27.Կանադացի նկարիչ ... Գոնսալվես: 29.Անտեղյակ: 30.Քաղաք Իսպանիայում: 31.Նյարդ: 32.Կրակի պեծ (խսկց.): 36.Կտուր: 37.Կիլիկիայի հայ թագավոր: 38.Դեմ-...: 39.Հողատեր, կալվածատեր: 40.Զովացուցիչ ըմպելիք: 43.Քաղաք Նիգերիայի հարավում, համանուն գետի ափին: 44.Այստեղ (բրբ.):

***Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ***

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Փայլան: 4.Կումայրի: 10.Րաֆֆի: 11.Միեր: 12.Ջարկի: 13.Ելս: 15.Ջրա: 16.Այրում: 17.Կնոջ: 19.Եսի: 20.Օմարի: 21.Աք: 23.Խցիկ: 24.Արամո: 26.Վաշխառու: 31.Շորժա: 34.Աքլոր: 35.Ոստոտ: 37.Քար: 38.Եռակի: 40.Դսեղ: 42.Թան: 44.ՄԱԿ: 45.Բարի: 46.Լա: 47.Սիլվա: 50.Քամի: 52.Ռոքսանա: 53.Գաննա: 55.Ենա: 56.Ցույց: 57.Ակնդրել: 59.Հեսու: 60.Քաջ: 61.Ալտ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Փարաջանով: 2.Յաֆֆա: 3.Արիզոնա: 5.Ուրմիա: 6.Արեգակ: 7.Րե: 8.Գարեջի: 9.Հասմիկ: 13.Երեց: 14.Լուսին: 17.Կմախք: 18.Որ: 21.Արշո: 22.Քասու: 23.Խոժոռ: 25.Մրտենի: 27.Շաքե: 28.Ալ: 29.Ռոք: 30.Ուրան: 32.Ատամ: 33.Սրիկա: 36.Ոդիսական: 39.Կալենց: 41.Ղեւոնդ: 42.Թամար: 43.Արի: 45.Որա: 46.Բան: 48.Լռենք: 49.Աքար: 50.Քարլա: 51.Ֆաուստ: 53.Գցել: 54.Նյու: 58.Եք: 59.Հա:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ჩვენი მისამართი: თბილისი 0105, გ.ათონელის ქუჩა 5,
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ტელ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ვრასტანი»
თბილისი, საქართველო
"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445